

*ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2020Թ. ՀՈՒՆՎԱՐԻՆ*



**ԹԻՎ 1**


## Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվարին\*

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2020թ. հունվարը 2019թ. հունվարի նկատմամբ) կազմել է 0.2%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 1.3%:

	Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՍԸՆԴ) երկու նիշ մակարդակ	2020թ.		
		հունվարը		
		2019թ. հունվարի նկատմամբ	2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2015թ. նկատմամբ **
		տոկոսային փոփոխություն		ինդեքս
00	Սպառողական գների ինդեքս-ընդամենը	0.2	1.3	105.3
	այդ թվում՝			
01	սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	-1.8	3.1	108.0
02	ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	5.0	0.4	114.2
03	հագուստ և կոշիկ	2.9	-1.6	105.7
04	բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.9	0.1	99.6
05	տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.3	-0.1	92.4
06	առողջապահություն	1.9	0.1	108.9
07	տրանսպորտ	2.9	0.1	107.0
08	կապ	-0.1	-0.1	98.2
09	հանգիստ և մշակույթ	-0.4	1.8	107.9
10	կրթություն	3.7	0.0	112.1
11	ռեստորաններ և հյուրանոցներ	1.7	0.6	108.2
12	տարբեր ապրանքներ և ծառայություններ	1.1	0.9	101.0

## Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. հունվարին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%




\* Սույն վերլուծականում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվարի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների և գների ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում՝ կուտակային (աճողական)) տեղեկատվությունը գեներվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-301):

\*\* Եվրոստատի կողմից սահմանված հղման ժամանակաշրջան:

**Ենթահիղեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2020թ. հունվարին (նախորդ ամսվա նկատմամբ)**

%



**Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի**

%

	2020թ. հունվար	
	2019թ. հունվարի նկատմամբ	2019թ. դեկտեմբերի նկատմամբ
	Սպառման ապրանքներ	-0.2
<i>այդ թվում՝</i>		
Սննդամթերք, խմիչք և ծխախոտ	-1.1	2.8
ոչ սպառման ապրանքներ	1.7	-0.3
Ծառայություններ	1.2	0.3

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գներն աճել են 0.9-2.4%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում սպառողական գների մակարդակն աճել է 1.1%-ով:

**Սննդամթերքի գներ:** 2020թ. հունվարին դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 3.1% գնաճ, ինչին մեծապես նպաստել են մրգի և բանջարեղենի՝ համապատասխանաբար 10.4% և 17.6% գնաճերը:

Բանջարեղենի ապրանքախմբում<sup>1</sup> 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ արձանագրվել է 4.4% գնանկում, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 17.6% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ բանջարեղենի գներն աճել են 10.6-33.9%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում բանջարեղենի գներն աճել են 14.6%-ով:


Մրգի ապրանքախմբում<sup>1</sup> 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ արձանագրվել է 0.9%, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 10.4% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ մրգի գներն աճել են 5.1-17.9%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում մրգի գների մակարդակն աճել է 10.8%-ով:

<sup>1</sup> 2020թ. հունվարին 2019թ. հունվար և դեկտեմբեր ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

**Բանջարեղենի և մրգի գների փոփոխությունները 2018-2020թթ. հունվարին**

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



**2020թ. հունվարին դեկտեմբերի համեմատ մրգի և բանջարեղենի ապրանքախմբերի ընդհանուր գնաճը կազմել է 14.9%: Վերը նշված ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 9.08% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի աճին 1.4 տոկոսային կետով:**

2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ հացաբուլկեղենի և ձավարեղենի, ոչ ալկոհոլային խմիչքի, սուրճի, թեյի, կակաոյի ապրանքախմբերում արձանագրվել է 0.1%, ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների 0.4% գնաճ (պայմանավորված ալկոհոլային խմիչքի 0.6% գնաճով):

Ձկան և ծովամթերքի ապրանքախմբում 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ գրանցվել է 4.4%, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.4% գնանկում:

Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ ձկան և ծովամթերքի գները նվազել են 3.2-0.5%-ով (մայրաքաղաքում գրանցվել է 1.8% գնանկում), 3-ում արձանագրվել է 0.1-2.1% գնաճ, իսկ երկուսում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում արձանագրվել է 13.5%, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 1.2% գնանկում:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ շաքարի և շաքարավազի ապրանքախմբում գրանցվել է 2.3-0.4% գնանկում, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Իջևանում: Մայրաքաղաքում շաքարի և շաքարավազի գները նվազել են 0.9%-ով:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ արձանագրվել է 3.7%, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.9% գնանկում: Չվի գինը 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ նվազել է 10.4%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 3.8%-ով:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գները նվազել են 1.7-0.4%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Հրազդանում: Մայրաքաղաքում կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբի գները նվազել են 0.8%-ով:

Մսամթերքի ապրանքախմբում 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ գրանցվել է 2.7%, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.3% գնանկում:

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ մսա-

մթերքի գները նվազել են 0.9-0.2%-ով, իսկ 3-ում գրանցվել է 0.1-0.3% գնաճ: Մայրաքաղաքում մսամթերքի գները նվազել են 0.3%-ով:

2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ յուղերի և ճարպերի ապրանքախմբում գրանցվել է 0.1% գնանկում:


**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 1.7% գնաճ, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.3% գնանկում:

2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ հագուստի գները նվազել են 3.6%-ով, տարբեր տեսակի կոշիկներինը՝ 2.4%-ով, խոշոր կենցաղային սարքերինը՝ 1.7%-ով, կենցաղային փոքր էլեկտրական սարքերինը՝ 1.2%-ով, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու գները՝ 0.3%-ով, կենցաղային և այգեգործական գործիքներինը, վառելանյութերինը և քսանյութերինը, գրասենյակային պարագաներինը՝ 0.1%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է մաքրող, լվացող միջոցների՝ 0.1%, ոսկերչական զարդերի՝ 0.2%, կահույքի և կահավորանքի 0.3% գնաճ, իսկ բնակարանի նորոգման և սպասարկման նյութերի, գորգերի և հատակի ծածկերի, դեղագործական ապրանքների գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 0.1%-ով, իսկ 2019թ. հունվարի համեմատ՝ համապատասխանաբար 1.2% և 0.4%-ով:

**Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2017-2020թթ.**

2015թ. նկատմամբ



Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.5-0.1% գնանկում, 2-ում՝ 0.1-0.2% գնաճ, իսկ 3-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.5%-ով:

**Ծառայությունների սակագներ:** Մատուցված ծառայությունների ոլորտում 2020թ. հունվարին 2019թ. հունվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սակագների 1.2%, իսկ 2019թ. դեկտեմբերի համեմատ՝ 0.3% հավելաճ:

2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ հանգստի և մշակութային միջոցառումների հետ կապված ծառայությունների սակագներն աճել են 0.1%-ով, սպասարկման ծառայություններինը (ռեստորաններ, սրճարաններ և համանման կազմակերպություններ)՝ 0.2%-ով, մարդատար տրանսպորտի ծառայություններինը՝ 0.4%-ով, հյուրանոցային ծառայություններինը՝ 2.6%-ով, հանգստի կազմակերպման համալիր ծառայություններինը՝ 3.1%-ով, իսկ բնակարանի նորոգման և սպասարկման ծառայությունների, կենցաղային սարքերի նորոգման, բժշկական, կապի, կրթության, վարսավիրանոցների և անձնական խնամքի սպասարկման

սրահների, իրավաբանական ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.3-0.9% հավելած, այդ թվում, հավելածի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Կապանում: Մայրաքաղաքում մատուցված ծառայությունների սակագներն աճել են 0.3%-ով:

**Արտարժույթի շուկա:** 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի համեմատ սպառողական և արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 1.3% և 0.2% հավելած (ԱՄՆ դոլարն արժևորվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 1.8% և 0.2% հավելած: 2020թ. հունվարին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 479.2 դրամ, ինչը 1.4%-ով ցածր է 2019թ. հունվարի համապատասխան ցուցանիշից (485.8 դրամ):

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների ինդեքսները ՀՀ-ում 2020թ.

%

	2020թ. հունվարը	
	2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2019թ. հունվարի նկատմամբ
<b>Միրգ, ընդամենը</b>	<b>110.4</b>	<b>100.9</b>
այդ թվում՝		
Խնձոր	114.6	112.4
Տանձ	113.2	99.7
Նուռ	119.3	104.8
Խաղող	118.9	108.1
Ադամաթուզ (բանան)	110.5	100.6
Խուրմա և արքայանարինջ	124.7	92.5
Նարինջ	98.6	112.2
Մանդարին	116.0	100.6
Կիտրոն	104.1	120.0
<b>Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը</b>	<b>117.6</b>	<b>95.6</b>
այդ թվում՝		
Կաղամբ	105.3	71.8
Կանաչ սոխ	104.5	122.9
Խառը կանաչեղեն	113.7	91.5
Լոլիկ	123.8	97.8
Վարունգ	142.3	91.5
Սմբուկ	129.7	99.0
Պղպեղ	126.2	90.8
Գազար	105.0	117.5
Ճակնդեղ	108.3	123.6
Գլուխ սոխ	101.2	102.9
Սխտոր	108.2	91.9
Մունկ	100.6	94.6
Կարտոֆիլ	104.8	91.2

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում<sup>1</sup>

%

	2018թ. դեկտեմբերը 2017թ. դեկտեմբերի նկատմամբ	2019թ.													
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	մայիսը	հունիսը	հուլիսը	օգոստոսը	սեպտեմբերը	հոկտեմբերը	նոյեմբերը	դեկտեմբերը	դեկտեմբերը 2018թ. դեկտեմբերի նկատմամբ	
		նախորդ ամսվա նկատմամբ													
Ավստրիա	100.1	99.0	100.0	101.1	100.3	100.1	99.9	99.2	100.1	101.0	100.3	100.2	100.7	101.8	
Բելգիա	99.8	98.4	101.8	100.2	100.2	100.0	99.9	99.2	101.1	99.4	100.3	100.0	100.3	100.9	
Բուլղարիա	100.0	100.2	100.3	100.2	100.6	100.2	100.0	101.3	100.2	98.8	100.2	100.3	100.8	103.1	
Հունգարիա	99.6	100.3	100.6	100.7	100.9	100.7	99.8	100.2	99.9	100.0	100.6	100.1	100.3	104.1	
Գերմանիա	100.2	99.0	100.5	100.5	101.0	100.3	100.3	100.4	99.9	99.9	100.1	99.2	100.6	101.5	
Հունաստան	99.9	98.7	100.3	101.4	101.0	99.6	100.6	98.8	99.4	101.5	99.9	99.3	100.4	101.1	
Դանիա	99.6	100.2	100.5	100.1	100.3	100.0	99.7	100.7	99.6	99.7	100.5	99.7	99.8	100.8	
Իռլանդիա	99.9	99.3	100.8	100.8	100.4	99.9	100.2	99.8	100.4	99.7	99.8	99.8	100.2	101.1	
Իսպանիա	99.5	98.3	100.2	101.4	101.1	100.2	99.9	98.9	99.9	100.4	100.7	100.0	99.9	100.8	
Իտալիա	99.9	98.3	99.7	102.3	100.5	100.1	100.1	98.2	100.0	101.4	100.2	99.7	100.2	100.5	
Կիպրոս	99.1	99.2	99.8	101.1	101.3	100.3	101.2	99.6	101.7	98.2	99.6	99.5	99.3	100.7	
Լատվիա	99.7	100.3	100.1	101.1	100.9	100.6	100.3	99.1	100.2	99.8	100.1	99.7	99.8	102.1	
Լիտվա	99.5	99.9	100.2	100.9	100.9	100.3	99.7	99.7	99.6	100.9	100.1	100.0	100.5	102.7	
Լյուքսեմբուրգ	99.3	98.9	101.7	100.3	100.3	100.5	99.7	99.2	101.2	100.0	100.0	100.0	100.1	101.8	
Մալթա	99.8	98.5	100.9	101.0	103.0	101.4	101.3	100.3	100.8	98.9	98.6	97.0	99.8	101.3	
Նիդերլանդներ	100.0	99.8	101.3	100.5	101.1	99.7	99.9	100.9	100.6	98.9	100.6	99.2	100.2	102.8	
Լեհաստան	100.0	99.9	100.3	100.4	101.0	100.3	100.2	100.0	99.9	100.1	100.3	100.1	100.6	103.0	
Պորտուգալիա	99.6	98.7	99.7	102.1	101.0	100.3	100.4	98.3	99.9	101.4	99.6	99.3	99.7	100.4	
Ռումինիա	100.1	100.9	101.0	100.5	100.7	100.5	99.6	99.8	100.0	100.1	100.4	100.2	100.4	104.0	
Սլովակիա	99.9	101.2	100.2	100.7	100.2	100.4	100.1	100.1	100.2	100.1	99.9	100.2	99.9	103.2	
Սլովենիա	99.4	99.1	100.7	100.7	100.7	100.8	100.3	99.3	100.4	99.9	100.1	100.0	99.9	102.0	
Միացյալ Թագավորություն	100.2	99.3	100.5	100.2	100.6	100.3	100.0	100.0	100.4	100.1	99.8	100.2	100.0	101.3	
Ֆինլանդիա	99.8	99.6	100.5	100.1	100.7	99.8	100.0	99.7	100.4	100.0	100.1	99.9	100.2	101.1	
Ֆրանսիա	100.1	99.4	100.1	100.9	100.4	100.1	100.3	99.8	100.5	99.6	99.9	100.1	100.5	101.6	
Խորվաթիա	99.4	99.4	100.1	100.8	100.6	100.4	100.3	100.5	99.6	99.8	100.2	99.6	99.9	101.3	
Չեխիայի Հանրապետություն	100.0	101.0	100.3	100.2	100.1	100.7	100.2	100.4	100.1	99.5	100.5	100.1	100.2	103.2	
Շվեդիա	100.5	98.9	100.7	100.2	100.7	100.3	99.8	100.5	99.5	100.5	100.1	100.1	100.4	101.7	
Էստոնիա	99.7	99.6	100.2	100.4	101.5	100.4	100.5	99.7	100.7	99.8	99.8	99.6	99.7	101.8	
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-28) <sup>2</sup>	100.0	99.2	100.4	100.8	100.7	100.2	100.1	99.7	100.1	100.2	100.1	99.8	100.3	101.6	
Հայաստան	101.5	101.8	100.6	100.1	99.9	99.6	98.1	98.1	99.6	100.2	100.6	101.1	101.3	100.7	
Ռուսաստան	100.8	101.0	100.4	100.3	100.3	100.3	100.0	100.2	99.8	99.8	100.1	100.3	100.4	103.0	
Բելառուս	100.8	100.9	101.3	100.4	100.0	100.3	99.9	100.2	99.8	100.5	100.5	100.2	100.5	104.7	
Ուկրաինա	100.8	101.0	100.5	100.9	101.0	100.7	99.5	99.4	99.7	100.7	100.7	100.1	99.8	104.1	
Ղազախստան	100.7	100.5	100.3	100.5	100.5	100.6	100.2	100.2	100.2	100.3	100.6	100.7	100.7	105.4	
Ղրղզստան	100.7	100.4	99.8	99.7	99.6	100.1	100.6	99.9	100.0	100.3	100.5	100.9	100.9	103.1	
Մոլդովա	100.9	101.3	100.4	100.5	100.8	101.4	99.8	99.8	100.0	100.8	100.9	100.8	100.9	107.5	
Տաջիկստան	105.4	100.6	100.6	100.3	101.0	101.0	100.4	100.9	100.9	100.6	100.1	100.6	100.8	...	
Վրաստան	101.5	101.3	100.3	101.0	100.2	100.5	99.0	100.0	100.8	101.7	100.8	100.9	100.4	107.0	
Կանադա	99.9	100.1	100.7	100.7	100.4	100.4	99.8	100.5	99.9	99.6	100.3	99.9	100.0	102.2	
Նորվեգիա	100.0	99.4	100.9	100.1	100.5	99.7	100.1	100.6	99.3	100.5	100.1	100.4	99.6	101.2	
Բրազիլիա	100.2	100.3	100.4	100.8	100.6	100.1	100.0	100.2	100.1	100.0	100.1	100.5	101.2	104.3	
Կորեայի Հանրապետություն	99.7	99.9	100.4	99.8	100.4	100.2	99.8	99.7	100.2	100.4	100.2	99.4	100.2	100.7	
Չինաստան	100.0	100.5	101.0	99.6	100.1	100.0	99.9	100.4	100.7	100.9	100.9	100.4	100.0	104.5	
ԱՄՆ	99.7	100.2	100.4	100.6	100.5	100.2	100.0	100.2	100.0	100.1	100.2	99.9	99.9	102.3	
Թուրքիա	99.6	101.1	100.2	101.0	101.7	100.9	100.0	101.4	100.9	101.0	102.0	100.4	100.7	111.8	
Շվեյցարիա	100.0	99.4	100.3	100.3	100.6	99.8	100.2	100.0	100.1	99.6	99.8	99.6	100.2	99.9	
Ճապոնիա	99.7	100.1	100.0	100.0	100.3	100.0	99.9	99.9	100.3	100.1	100.3	100.1	100.0	100.8	

... - Տվյալները բացակայում են:

<sup>1</sup> Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2019թ. դեկտեմբերի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

<sup>2</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2020թ. հունվար-փետրվարին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2020 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2020թ. մարտ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տես՝ ծածկագիր 1300-301, Մաս 3, էջ 132):